



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



» 05 2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0091 - 23

**Ձեռնարկողը՝**

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ  
Երևան, Շիրակի փ., Արտադրամաս 74/16

**Գործունեությունը՝**

Արագածոտնի մարզի Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

Խաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0091 - 23

<17> Տաշխեխ 2023թ.

Արագածոտնի մարզի Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի  
«Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա  
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, Նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Արևուտ համայնք, բն.Արևուտ

**Ներածական մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նախատեսվող՝ Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի Հարավ-արևմտյան տեղամասը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Արևուտ (Բարոժ) համայնքում, նույնանուն գյուղից շուրջ 1.8-2.5 կմ հարավ-արևմուտք, Փոքր Արտենի լեռան հարավ-արևելյան լանջերին՝ հանքավայրի Հարավային տեղամասի հարևանությամբ: Տեղամասի մոտակա բնակավայրերն են Արևուտ և Արեգ գյուղերը, որոնք միմյանց հետ կապված են ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Հայցվող տարածքը տեղադրված է Փոքր Արտենիի հրաբխային զանգվածի հարավ-արևելյան լանջերին: Հարավ-արևմտյան տեղամասին մոտ գտնվող բնության հուշարձաններն են «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոնը (հիմքը գտնվում է 1,5կմ հեռավորության վրա) և «Փոքր Արտենի» հրաբուխը: Փոքր Արտենի գմբեթանման հրաբխային կառույցը (700-800մ հիմքով և 250մ բարձրությամբ) կազմված է բրեկչիանման ապակուց, լիպարիտներից և օբսիդիաններից: Արդյունահանման նպատակով հայցվող տեղամասի ամենամեծ բարձրությունները 1609մ է, իսկ Փոքր Արտենի լեռան բարձրությունը՝ 1753.9մ:

Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի Հարավ-արևմտյան տեղամասի մարվող պաշարները հաշվարկվել են 3994.32հազ.մ<sup>3</sup> ծավալով: Տեղամասում՝ 20.95հա տարածքի վրա 01.30.2020թ. դրությամբ հաշվարկվել են 3994.32հազ.մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով պեռլիտային ավազների պոտենցիալ հաշվեկշռային պաշարներ՝ գնահատված C<sub>1</sub> կարգով, որոնք պիտանի են որպես լցանյութ՝ թեթև բետոններում և այլ տեսակի շինարարական աշխատանքներում օգտագործելու համար: Հանքավայրի շահագործման





համար ընտրված է բաց եղանակով մշակումը՝ տարեկան 184700մ<sup>3</sup> արտադրողականությամբ:

Ընկերության կողմից նախագծված տեղամասը զբաղեցնում է 21.0հա տարածք և բնութագրվում է հետևյալ կորդինատներով (կորդինատային համակարգը՝ ARM WGS-84).

1.	X-4469331	Y-8396459
2.	X-4469721	Y-8396436
3.	X-4469849	Y-8396719
4.	X-4469829	Y-8396947
5.	X-4469748	Y-8396941
6.	X-4469726	Y-8397156
7.	X-4469573	Y-8396905
8.	X-4469313	Y-8396580

Բացահանքում օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսված է առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման՝ էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնային համալիրի միջոցով: Հանքադաշտի բացումը նախատեսված է բացահանքի 1595.0մ բարձրության հորիզոնից: Այս նպատակով գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհի 1460.0մ բարձրության նիշից դեպի 1595.0մ բարձրության հորիզոն նախատեսված է անցկացնել ավտոճանապարհ՝ 1500մ երկարությամբ 8մ լայնությամբ: Հաջորդ հորիզոնները մշակվելու են այս ավտոճանապարհը աստիճանաբար կտրտվելով: Լեռնակապիտալ աշխատանքների ժամանակ 0.24մ միջին հզորությամբ հողաբուսական շերտը նախատեսված է հանել և առանձին կուտակել արտաքին լցակայանում, հետագա ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով:

Ըկերության կողմից նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով..

- Ամենամեծ երկարություն՝ 800մ,
- Ամենամեծ լայնություն՝ 435մ,
- Բացահանքի խորություն՝ մինչև 155,0մ,
- Մակաբացման ապարների միջին հզորություն՝ 1.22մ,
- Օգտակար հանածոյի միջին հզորություն՝ 19.07մ,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակ՝ 3994.32հազ. մ<sup>3</sup>,
- Տարեկան մարվող պաշարները՝ 199716մ<sup>3</sup>;
- Օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակ՝ 3694.0հազ. մ<sup>3</sup>,
- Տարեկան արդյունահանվող պաշարները՝ 184700մ<sup>3</sup>;
- Մակաբացման ապարների քանակ՝ 255540մ<sup>3</sup>,
- Մակաբացման միջին գործակից՝ 0.069մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>:
- Բացահանքի օտարման մակերես՝ 20.95հա:

Ավտոճանապարհների անցումը, մակաբացման ապարների հավաքումը, կուտակումը նախատեսված է բուլդոզերի օգնությամբ: Մակաբացման ապարները բացահանքի եզրագծի մեջ ներկայացված են միջինը՝ 0.24մ հողաբուսական շերտով /50270մ<sup>3</sup> ծավալով/ և 0.98մ հզորությամբ ժամանակակից փոխար նստվածքներով՝ /205270մ<sup>3</sup> ծավալով/: Առանց նախնական փխրեցման մակաբացման ապարները տեղափոխվում են միջինը 0.5կմ հեռավորության վրա ու կուտակվում բացահանքի սահմաններում՝ սկզբում բացահանքի վրա, նրա հարավային հատվածում (N1-ը հողաբուսական շերտի լցակայան և N2 ժամանակակից փոխար նստվածքների լցակայան), այնուհետև բացահանքի բացված հատակին՝ ձևավորելով ներքին լցակայան: Լցակայան տեղափոխվող ապարների քանակը ընդհանուր կկազմի՝ 276440մ<sup>3</sup>:





Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո: Ներքին լցակույտում կուտակված՝ 6700մ<sup>3</sup> ծավալը բուլդոզերով կտեղափոխվի, կփռվի և կհարթեցվի բացահանքի տարածքում: Հարթեցումը կկատարվի բացահանքի ողջ մակերեսով՝ 185200մ<sup>2</sup>, ինչպես նաև արտադրական հրապարակի 250մ<sup>2</sup> և ավտոճանապարհների՝ 320մ<sup>2</sup> մակերեսներում / ընդհանուր՝ 185770մ<sup>2</sup> մակերեսում: Բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերականգնման համար ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 1557.8 հազ. ՀՀ դրամ: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո նախատեսված է տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիոն աշխատանքների /լեռնատեխնիկական և կենսաբանական փուլեր/ իրականացման համար անհրաժեշտ գումարը ընդհանուր հաշվարկվել է 2820.8 հազ.դրամ:

**Փորձաքննական հիմնավորումներ:** Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Հայտի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված հանրային քննարկումներում նախատեսվող գործունեությունը հանրության կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Արագածոտնի մարզպետարանը, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, հադաստրի կոմիտեն, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում և եզրակացության կազմման համար:

Փորձաքննական գործընթացում ստացված կարծիքների հիման վրա պարզվել է, որ.

1. Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի և հանքավայրի հարակից տարածքներում հանդիպում ՀՀ Կարմիր գրքում գրանցված Զանգակ Մասալսկու բուսատեսակը:

2. Արտենիի պեռլիտային ավազների հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման համար նախատեսված տարածքը համադրվում է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում հաստատված «Փոքր Արտենիի հրաբուխ» բնության հուշարձանի հետ:

Հուշարձանի պահպանության նպատակով և առկա խնդրին համապատասխան ընթացք տալու համար կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ: Շրջակա միջավայրի նախարարության գրություններով երեք անգամ Հայտը և ՇՄԱԳ հաշվետվությունը վերադարձվել է Ընկերությանը լրամշակման: Փորձաքննության գործընթացում ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կողմից տրամադրվել է մասնագիտական կարծիք, համաձայն որի՝ Ընկերության կողմից հայցվող տեղամասը, որը հիշատակվում է որպես «կառույցը հիմնատակող պեռլիտ-պեմզային հաստված» /ինչի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ՇՄԱԳ-ում/ հանդիսանում է «Փոքր Արտենի» հրաբուխի կառույցի մաս և նշված տեղամասը հասնում է Փոքր Արտենի օբսիդիաններին:

Հաշվի առնել վերը նշված հանգամանքները հարկ է նշել.

- արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը (ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18, ՀՀ Բուսական

աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17),

- Հայաստանի Հանրապետությունում բնության հուշարձանի զբաղեցրած տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը սպառնում է դրա պահպանությանը (Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք, հոդված 19-ի 1-ին մաս):

Միաժամանակ հայտնում եմ, որ Համաձայն ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 26-ի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի՝ «Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների կամ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան՝ բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ»:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արագածոտնի մարզի Արտենիի պեոլիտային ավազների հանքավայրի «Հարավ-արևմտյան» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝  Երիքնազ Մկրտչյան

